



ՀՕՄ-ի Թորոնթո «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՍՆԱՃԻՒՂ ARS TORONTO "ROUBINA"

Լրատու Newsletter

06/ 2024

ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 61-ԱՄԵԱԿԸ



Կարդալ Թորոնթոհայի Յօդուածը էջ 12-13

Read article in TorontoHye p. 12-13

Դիտել Նոր Հայ Հորիզոն-ի ձեռնարկը

Click here to watch Nor Hai Horizon Program

Բովանդակութիւն / Contents

- Մասնաճիւղի Լուրեր եւ Տեղեկութիւններ
- Յառաջիկայ Ձեռնարկներ
- Նախկին Ձեռնարկներ

- News from Toronto Roubina Chapter
- Upcoming Events
- Previous Events

Մասնաճիղի Լուրեր Եւ Տեղեկություններ News from Toronto “Roubina” Chapter

2020-ի Արցախեան Երկրորդ պատերազմի հետեւանքով հազարաւոր Հայ երեխաներ կորսնցուցին իրենց հերոս հայրերը որոնք կեանքի գնով պաշտպանեցին մեր հայրենիքը, հետեւաբար Հայ Օգնութեան Միութիւնը այս երեխաները ընդգրկեց իր ցանկերուն մէջ, եւ “Որբախնամ” ծրագիրը վերանուանեց “Զոհուած Հերոսներու Զաւակներ” ծրագիր: Սեպտեմբեր 2023-ի իրադարձութիւններուն՝ ապա Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած պայթումի հետեւանքով զոհուածներու երեխաները ընդգրկուեցան սոյն ծրագրին մէջ:

Այսօր հայրական գուրգուրանքէն զրկուած 1,062 երեխաներ տակաւին կարիք ունին հովանաւորներու: Հետեւաբար ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը կրկին կոչ կուղէ բոլոր միաւորներուն որ իրենց շրջաններէն ներս լայնօրէն ծանուցեն այս ծրագիրը, որպէսզի հնարաւորինս շուտ կարելի ըլլայ հովանաւորներ ապահովել այս երեխաներուն: Տարեկան \$330 ամերիկեան տոլարի կամ \$450 Գանատական տոլարի յատկացումով ըլլանք յոյսի նշոյլներ այս երեխաներուն կեանքին մէջ:



 **Զոհուած Զերոսներու Զաւակներ**
Children of Fallen Heroes

\$450 CAD/year
(\$330 USD)

Հովանաւորէ զոհուած զինուորի զաւակ մը
եւ բարելաւէ իր կեանքը
Sponsor a child of a fallen Hero
and make an impact

To sponsor a child please contact:

Seda Tachdjian / Ontario 416-878-9518
Աննա Թաչճեան / Օնտարիո 416-878-9518
Anna Boulgarian / Quebec 514-592-4976
Աննա Դուլկարեան / Քեբեկ 514-592-4976

For Donations please visit ARS-Canada.ca
For e transfers
ars-canada@bellnet.ca

Armenian Relief Society of Canada

Մասնաճիւղի Լուրեր եւ Տեղեկութիւններ News from Toronto “Roubina” Chapter

On April 18, 2024 at the Ontario Volunteer Service Awards ungerouhiner Ahnie Krikorian (35 years), Anna Galustian (15 years) and Iren Telemian (15 years, absent at event) received their volunteer award. Silvana Babikian, a member of our chapter, received her award as a volunteer from St. Mary's Armenian Apostolic Church. Thank you all for your dedication.



Մասնաճիւղի Լուրեր եւ Տեղեկութիւններ News from Toronto "Roubina" Chapter

Յունիս 4, 2024-ին, ՀՕՄ-ի անդամական ժողովի ընթացքին, ՀՕՄ-ի շարքերուն միացան 3 նորագրեալներ՝ Ֆլօրա Կիրակոսեան, Ուրսուլա Չիլգէւորգեան եւ Անի Պէքմէզեան: Երդման Արարողութեան կնքամայրն էր՝ ընկհ. Քրիսթին Աւետիսեան:



Social Services



**ՀՕՄ-ի Ընկերային Ծառայութեան գրասենեակը բաց է ամէն
Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, եւ Ուրբաթ օրերը՝ ժամը
10:00 – 4:30**

Հինգշաբթի ժամը 2:00-8:30

Our Social Services Office is open daily Monday, Tuesday, Wednesday
and Friday 10:00 – 4:30
Thursdays 2:00-8:30

Հեռ: 416-495-0644

arssocialservices@gmail.com

Ուտեստեղէնի Հաւար / Food Drive

149 lbs. of food donated to North York Food Harvest.
Thank you to all those who donated.



Կամաւորներու Գնահատանք/Volunteer Appreciation

Ապրիլ 16-ին Fieldstone Commons ծերանոցը կազմակերպեց կամաւորներու գնահատանքի երեկոյ: ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղէն մի քանի կամաւոր ընկերուհիներ ներկայ էին այս հաւաքին: Շնորհակալութիւն ձեր բոլոր ժրաջան աշխատանքին համար



Ծերանոցի Այցելություն

Ապրիլ 25 եւ Մայիս 30, 2024-ին ՀՕՄ-ի “Ռուբինա” Մասնաճիւղի Ընկերային Ծառայութեան յանձնախումբի կազմակերպութեամբ ընկերուհիներ՝ Սեդա Թաշճեան, Օսան Փոլատեան-Կիրակոսեան, Թալին Շաքարեան, Տալիդա Բշտիկեան եւ Էմմա Պասմաճեան ճաշ եւ անուշեղէն հրամցուցին Fieldstone Commons Արարատի Հայ բաժնի տարեցներուն:
Բոլորը չափազանց գոհ էին եւ շատ ուրախ մնացին, նաեւ յայտնեցին իրենց երախտապարտութիւնը: Միշտ կը սպասեն մեր այցելութիւնը:



Յառաջիկայ Ձեռնարկներ / Upcoming Events

12 Յուլիս 2024 Յանձնախուրբերու Գնահատանքի երեկոյ

20 Յուլիս 2024 Քայլարշաւ

16 Նոյեմբեր, 2024 Տոհմիկ Օր Ձօնուած՝ Իրաքի Հայ

Գաղութին - Միջազետք

July 12, 2024 Committees Appreciation Evening

July 20, 2024 Walkathon

November 16, 2024 Heritage Day, Dedicated to the

Armenian Community of Iraq – Mesopotamia

Click [here](#) to donate and register



Յառաջիկայ Զեռնարկներ / Upcoming Events



Նախկին Ձեռնարկներ Previous Events

Արեւելումի Երեկոյ / Orientation Night

10 Ապրիլ, 2024-ին տեղի ունեցաւ Արեւելումի Երեկոյ, նորագրեալները ծանօթացնելու ՀՕՄ-ի գործունէութեան, ուր ընկհ. Մարալ Միսիրեան ներկայացուց ՀՕՄ-ի Շրջ. Վարչութեան կառոյցը և գործունէութիւնը, իսկ ընկհ. Անի Հոթոյեան-Ժողի, ներկայացուց ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի գործունէութիւնը, նաև անոնց յանձնուեցաւ նորագրեալի թղթածրարը :



Նախկին Ձեռնարկներ

Previous Events

ՀՕՍ-ի Օր / ARS Day

ՀՕՍ-ի «Ռուբինա» մասնաճյուղի 61-րդ ամեակի բացառիկ տոնակատարությունը Կիրակի 14 Ապրիլ, 2024-ի յետմիջօրէին Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահէն ներս, ՀՕՍ-ի պայծառ դրօշին ներքեւ հոծ բազմութիւն մը համախմբուած էր նշելու ՀՕՍ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճյուղի 61-րդ ամեակը:

Ձեռնարկը ներկայութիւնը կը վայելէր Հոգեւոր հովիւներու, կազմակերպութիւններու, ներկայացուցիչներու, մեծարեալներու, ՀՕՍ-ի Ամենօրեայ Վարժարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմի ներկայացուցիչներու, մեծաթիւ ՀՕՍ-ուհիներու եւ հիւրերու:

Օրուան հանդիսավար՝ Տիրուկ Մարգարեան Կարապետեան ողջունեց ներկաները, ապա՝ Գանատայի, Հայաստանի, Արցախի եւ ՀՕՍ-ի քայլերգներով սկիզբ առնող ձեռնարկը շարունակուեցաւ՝ մէկ վարկեան յոտնկայս, յարգանքի տուրք մատուցելով անցեալէն այսօր մեզմէ առյաւէտ բաժնուած ՀՕՍ-ուհի ընկերուհիներուն յիշատակին:

ՀՕՍ-ի օրուան յանձնախումբի ատենապետ՝ ընկհ. Վարդուհի Պարտագճեան կատարեց բացման խօսքը, իսկ մասնաճյուղիս ատենապետ՝ ընկհ. Անի Հոթոյեան-Ժոլին, վարչութեան խօսքը փոխանցեց ներկաներուն եւ անդրադարձաւ մասնաճյուղիս ընթացիկ տարեշրջանի գործունէութեան եւ իրագործած օժանդակութիւններուն մանրամասնութիւններուն մասին:

ՀՕՍ-ի Ամենօրեայ Վարժարանի 6-րդ դասարանի աշակերտներէն խումբ մը, Տիկին Սօնա Յովսէփեանի ղեկավարութեամբ, կատարեցին՝ «Կռունկներ» եւ «Ղարաբաղ իմ» երգերը:

Օրուայ բանախօսն էր՝ԱՄՆ-էն Ժամանած Դոկտ. Խաչիկ Մուրատեան: Ան՝ "ՀՕՍ-ը՝ որպէս կանացի կազմակերպութիւն, ձուլումի հոսանքին դէմ ի՞նչպիսի միջոցներով կրնայ պայքարիլ» խորագիրը կրող տպաւորիչ եւ այժմէական դասախօսութեան ընթացքին խօսեցաւ՝ անցեալէն այսօր ՀՕՍ-ի տարած հայապահանման եւ նուիրական աշխատանքներուն ու անոր յաղթահարած մարտահրաւերներուն մասին՝ հեռաւոր Չինաստանէն մինչեւ միջին արեւելք ու Ամերիկա:

Մասնաճյուղիս 2024 տարուան ՀՕՍ-ի օրուան երիտասարդ կամավորը հանդիսացաւ՝ Նարօտ Գըլըպօգեան, որուն մրցանակաբաշխութիւնը կատարուեցաւ ՀՕՍ-ի «Ռուբինա» մասնաճյուղի ատենապետ՝ ընկհ. Անի Հոթոյեան-Ժոլիի ձեռամբ:

Ապա՝ գեղարուեստական բաժինով հանդէս եկաւ Ալին Թօփճեան Պչաքճեան ու հիասքանչ ձեւով մեկնաբանեց «Իմ Անի» եւ «Կապոյտ Մանուշակ» երգերը:

ՀՕՍ-ը իր պատմութեան ընթացքին՝ արժեւորելով, մեծարած է հայրենասիրութեան եւ ազգասիրութեան լոյսի ճանապարհի առաքեալները: Մասնաճյուղս 1986-էն ի վեր սովորութիւն դարձուցած է մեծարել գաղութիս արժանիները:

ՀՕՍ-ի Օրուան 2024-ի երեք մեծարեալներն էին Տիկին Սիւզի Մելիտոնեան, ընկհ. Իռէն Թիլիմեան եւ պրն. Բաֆֆի Սարգիսեան, որոնք այս առթիւ մեծարուեցան ՀՕՍ-ի օրուան յատուկ բլաքով:

ՀՕՍ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ եւ մասնաճյուղիս ներկայացուցիչ՝ ընկհ. Մարալ Միսիրեանի ձեռամբ կատարուեցաւ 50 եւ 35 տարուան անդամակցութեան գնահատագրերու եւ զարդասեղներու յանձնումը: Մասնաճյուղիս ատենապետ ընկհ. Անի Հոթոյեանի ձեռամբ կատարուեցաւ 25 եւ 15 տարուան անդամակցութեան զարդասեղներու յանձնումը:

ՀՕՍ-ի աւիւնը կը կանաչի ու կը թարմանայ նորագրեալ անդամներով: Նորագրեալներու Երդման Արարողութիւնը կատարուեցաւ կնքամայրութեամբ՝ ընկհ. Քրիսթին Աւետիսեանի:

Նախկին Ձեռնարկներ Previous Events

ՀՕՄ-ի ՕՐ/ ARS Day Continued

ՀՕՄ-ի բոցավառ ջահը սերունդէ սերունդ փոխանցուեցաւ մասնաճիւղիս երեք ընկերուհիներէն՝ ընկհ. Այտա Գանձապետեանէն կրտսեր ընկհ. Սոֆիա Ալեքսանեանին: Ապա միասնաբար հատեցին օրուայ կարկանդակը: Ձեռնարկի աւարտին իրենց ուխտը կատարելու նպատակով մոմավառութեան մասնակցեցան ուխտաւոր ՀՕՄ-ուհիները, ապա՝ Տէր Տաթև Աւագ քահանայ Միքայէլեան ներկաներուն փոխանցեց հոգեւոր հովիւի օրհնութիւնը: ՀՕՄ-ի օրուան աւարտին ներկաները ճաշակեցին ՀՕՄ-ուհիներուն պատրաստած համադամ հիւրասիրութիւնն ու ՀՕՄ-ի օրուան կարկանդակը:



Նախկին Ձեռնարկներ Previous Events

Mother's Day

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի Մայրերու Օրուայ նուիրուած պտոյտը տեղի ունեցաւ Շաբաթ, 4 Մայիս 2024-ին Holland Marsh Wineries-ի մէջ: Զուարճալի ժամեր անցուցինք, վայելելով արեւոտ օդը, համտեսելով զանազան գինիներու տեսակները, համեղ ճաշերը եւ ուրախ մթնոլորտը:

Great memories were created celebrating ARS Toronto "Roubina" Chapter's Mother's Day event at Holland Marsh Wineries on Saturday, May 4, 2024. We enjoyed a wonderful day filled with wine tasting, an informative wine tour, a delicious meal followed by pleasurable and fun entertainment and perfect sunny weather!



Նախկին Ձեռնարկներ Previous Events

Fish Night

Another successful “Fish Night” organized by ARS Bazaar Committee on May 23, 2024. Guests enjoyed an evening full of laughter, scrumptious food and great atmosphere

